տեսքով, սուրբ գիրքը ասում է. "Եւ խաղաց Հոգի Տեառն 'ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ և առ յապայ": Եւ այն Հոգին անսպառ և անդադար խաղում է Ձեր վերայ, և այն Հոգւով լուսաւորումք և պաշտպանումք Դուք Հայկական Եկեղեցի:

Թող աստեղագէտներն ապացուցանեն, թէ երկիրը շրջում է արեգակի չորս կողմ. Մեր ԱՐԵԳԱԿԸ շրջում է մեր չորս կողմ և շրջում է անդադար Նորա համար, որ մենք բարեպաշտութեամբ վարենք մեր կեանքը: Շրջի՛ր ուրեմն, ով Արեգակդ մեր, շտապով յաջողութեամբ, շրջի՛ր հսկայական քայլերով բոլոր Քո՛ բարի նպատակներով և բարոյապէս փրկի՛ր Ազգը, կեանքից մեռնելու կողմը միայն մի՛ շտապիր: Այս դէպքում, որպէս Յեսու Նաւեայ, մեր ձեռները և սրտերը բարձրացած, կաղաղակենք. "կանգնի՛ր, Արեգակ, և մի՛ շարժվիր մինչև Քո մեծ նպատակներին առաջ եկող բոլոր արգելքները փառաւորօրէն յաղթես: Դուք արդէն յաղթեցիք բազմաթիւ արգելքներ և դժուարութիւններ՝ Ձեր իմաստութեամբ: Մեր սէրը դէպի մեր Հայրը՝ չունի սահմաններ, անյաղթելի է. բայց Ձեր հայրական սէրը՝ գերազանցում է մեր զգացմունքները: Հայր, Դուք մեզ ևս յաղթեցիք: Եւ ո՞վ կարող էր հասնել Ձեր այս փառքի բարձրութեանը: Ի՞նչ պատիւ կարող էինք մատուցանել Ձեզ՝ որ հաւասարվէր ամբողջ Հայկական Ազգի ընտրեալ՝ լինելու անփոխարինելի պատուին: Դուք Հայրապետ էք ոչ միայն Ձեզանով յաջորդված, այլ Ձեզանով և պահպանված Եկեղեցւոյ—: Հայր, Վեհափառ Հայր, փորձառութեան կրակով մաքրագործված Հայր: Դուք ունիք պաշտպանել և կարգաւորել Հայկական Եկեղեցի և Նորա պաշտօնեաներ: "Ուսումնարաններ, ուսումնարաններ և միշտ ուսումնարաններ" փրկարար ձայնը Ձեր Գահի բարձրութիւնից հասնում է անդադար Հայերի ականջին: Եթէ Հայկական պատմութիւնը պիտի այսուհետեւ ևս շարունակվի, Դուք պատրաստումք նորա մէջ Ձեզ համար ոսկեղէն տողերի տեղը: Դուք կամենումք գոհել Ձեզ Հայկական Ազգի կարելի բարեկարգութեան համար: Անթիւ գործակատարներ Ազգիս բարոյական փրկութեան համար միանգամայն 'ի հուր և 'ի ջուր պատրաստ անձներ Դուք իմանումք գտնել Հայերիս մէջ, Վեհափառ Հայր: Մեծ գործի դժուարութիւններն պիտի Ձեր փառքը մեծացնեն, բայց թող դժուարութիւնների յիշատակումն չվշտացնէ Ձեր հոգին:

Ոչինչ, ոչինչ թո՛ղ չխանգարէ Ձեր և մեր սուրբ ուրախութիւնը: Ուրախ լե՛ր յոյժ՝ դուստր Սիօնի, քարոզեա դուստր Երուսաղէմի. ահա Թագաւոր քո գայ առ քեզ ԱՐԴԱՐ և ՓՐԿԻՉ: Այս Իսրայէլը կուրախանայ Աստուծու վերայ: Սիօնի որդիները կուրախանան իրանց Թագաւորի վերայ: Թո՛ղ բոլոր բազմութիւնը սկսէ Աստուած գովել. օրհնված է Աստուծոյ անունով եկողն:

Մեր սրտերը բորբոքող ընդհանուր ուրախութիւնը թո՛ղ չլինէ մեր սիրալառ սրտերից մի բաղմարովանդակ բուրվառ Աստուծոյ առաջ, որ մատուցանենք Ձեր սրտի խունկը Նորան, որ պարգևեց մեզ Վեհափառ Գէորգը:

Հայեր, իմ պաշտելի Հայեր, Ձեր Կաթողիկոսին բարձր և խոր յաւիտենական սէրով սիրող և հաւատարիմ Հայեր, մտածեցէք—ունի՞նք արդեօք Ազգային պարծանք ուրիշ մի ինչ՝ բացի Կաթողիկոսից: Իմ ազնիւ Հայեր, մեր փառքը և մեր պարծանքը մեր մէջ հանդիսացած է, մեր Տէրը և մեր Հայրը ահա մեզ հետ է, իւր հետ բերումէ մեզ փրկութիւն և կեանք: Աղօթենք ուրեմն:

Վեհափառ Հայր, Թիֆլիսի հասարակութիւնը և Քրիստոսի սրբազան և սուրբ պաշտօնեաներն ահա ամենաբարձր սէրով և զարմացմամբ, ազնիւ յոյսերով և ցանկութիւններով լի որդիական ակնածութեամբ կանգնած ենք Ձեր առաջ, և սպասում ենք Ձեր քաղցր ակնարկութեան, որ համարձակենք մօտենանք Քո հոյակապ փառքին, արժանանանք Քո սուրբ Աջին և ուրախանանք: Ուրախանանք այո, որ մեծ է մեր Կաթողիկոսը, մեծ է Գէորգ Դը, ամեն Հայերի Վեհափառ Կաթողիկոսը մեծ է:

Գիտեմ իմ հոգւոյ բոլոր՝ երևակայութիւնները տկար են փառքիդ ստուերն անգամ նկարել. ուստի թոյլ տվէք հիանանք հրաշափառ Տէրութեանդ, և մխիթարութեան արտասուքով աղաղակենք Սաղմոսերգուի հետ. "Օրհնեալ է Տէր Աստուած Իսրայէլի, որ առնէ զքանչելիս միայն և օրհնեալ է անուն սուրբ փառաց յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր, եղիցի եղիցի":

Կեցցէ ուրեմն Վեհափառ Հայր Գէորգը, մեր Կաթողիկոսը, կեցցէ Ազգի շինութեան համար, կեցցէ որպէս ժողովրդի բարի Հայր, որպէս Եկեղեցւոյ ընտիր Քահանայապետ, որպէս Հայկական Ազգի չոր և ցամաք անապատի խմատուն շինող և բարեզարդող: Կեցցէ՜, կեցցէ՜:

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՏԵՓԱՆԷ

«Հայկական Աշխարհ» Օրագրի Խմբագրող:

ԹԻՖԼԻՍ

1870, ՄԱՅԻՍԻ 24:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Այս օրս, Ձեր սուրբ օծման երրորդ տարեդարձը, շատ արժանայիշատակ օր է, քան թէ կարելի էր լռութեամբ անցանել դորա մօտից, առանց հասկանալու դորա խորհրդաւորութիւնը, թոյլ տալ դմա գնալ միանալ մեր կեանքի անցած օրերի հետ:

Ուրեմն ներեցէք ինձ տալ Ձեզ մի քանի խօսք, ամենեւին անզարդ և անպաճոյճ, բայց առ ի սրտէ, մի քանի խօսք յանուն Ներսիսեան դպրոցի պատուելի Հոգաբարձուների, յանուն նորա մէջ աշխատաւորների, յանուն իմ, որ Ձերում վեհագոյն հաւանութեամբ կոչուած եմ սպասաւորել Հայկազեան մանուկների կրթութեանը և դաստիարակութեանը Վրաստանիս մայրաքաղաքում։

Ներսիսեան դպրոցի Հոգաբարձուքը, նորա ուսուցիչ պաշտօնակատարքը և ես առ ի սրտէ շնորհաւորելով Ձեր սուրբ օծման այս երրորդ տարեդարձը, մաղթումենք Ձեզ ի վերուստ երկար և երջանիկ օրեր, կեանքի արկածներից անփորձ և անխռով օրեր, անդորրութիւն մտքի, պայծառութիւն հոգւոյ, անրեկանելի արիութիւն Կամքի։ Ո՛չ փոքրիկ են մեր յոյսերը Քեզանից, Դու մեծ Քահանայ, ո՛չ փոքրիկ մեր արդարացի ակնկալութիւնքը. բայց մեք քաջահաւատ եմք և վստահ միանգամայն, որ Դու, մեր նախնի վեհագոյն Գրիգորի, քոյին խորին իմացականութեամբ և շրջահայեաց տեսութեամբ կը հասկանաս այս մեր խորհրդաւոր ժամանակի և այժմեան հայկազեան սերունդի բազմամաննեայ պիտոյքը, կը լինիս պարագլուխ և նախապետ Հայկազեան լուսաւորութեան, երկրորդ Սահակ պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտութեան, ուսումնականների։ Մեք քաջահաւատ ենք, որ Վրաստանիս մայրաքաղաքի մէջ եղած Ներսիսեան դպրոցը Ձեր Վեհափառութեան կարող և իմաստուն հովանաւորութեան ներքոյ կ'աճէ, կզօրանայ, կը ծաղկի և կը պտղաբերէ կեանքի գործեր. Մեք քաջահաւատ ենք, որ գալոց օրերում Հայկազեան սերունդը կը պատմէ իւր զաւակներին. Ներսէս հինգերորդը տնկեց և սերմանեց, բայց Գէորգ չորրորդը ջուր ետ, իսկ Աստուած աճեցոյց։

Կեցցե՛ս դու, Վեհագոյն գլուխ մեր, կեցցես բարօրութեամբ վասն բարօրութեան քո՛ և զքեզ սիրող և մեծարող ազգի, որոյ աչքը և հոգիքը և սրտերը դարձուցած են առ Քեզ և ի վերայ քո։

Ս. Նազարեանց:

ԱՐԺԱՆԱՅԻՇԱՏԱԿ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ ԻՇԽԱՆԻ ԿՏԱԿԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ.

Ո՛չ սակաւ ուրախութեամբ հանդերձ խորին շնորհակալութեամբք կը փութամք հաղորդել մեր սիրելի Ազգայնոց, զի անցեալ մայիս ամսոյ մէջ հանգուցեալ արժանայիշատակ և անմահ բարերար Գահրաման Արղութեանց իշխանի կտակակատարք ամենայն սիրով կատարած են նոյն բարերարին կամքը, որ Աղէքսանդրապօլ քաղաքի մէջ Ազգային աղքատիկ օրիորդաց Ուսումնարան հաստատելոյ և կառավարելոյ համար 40 հազար ռուբլի կտակած և նուիրած է. ուստի և արժանացան ընդունիլ 'ի Վեհ. Կաթողիկոսէ՝ օրհնութեան և գոհունակութեան Կոնդակ։

Նոյնպէս Կոնդակաւ Նորին Ս. Օծութեան՝ Հոգաբարձութիւն ևս հաստատուած է նոյն ուսումնարանի համար. հետևաբար այսուհետև անհրաժեշտ պարտք կը մնայ նոյն Հոգաբարձութեան, ուսումնարանի շինութեան և կառավարութեան միջոցներուն պէտք եղած կարգադրութեանց կատարումը, և անմահ բարերարին Ազգօգուտ և բարենախանձ նպատակին իրագործութիւնը և արդիւնաւորութիւնը՝ Ազգին ապագային համար [illegible] զարգացնելով։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի ՆԵՐՍԻՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ ՏՓԽԻՍԱՑ.

Ամսոյս 1-ին Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեցաւ երթալ յայցելութիւն Ներսիսեան Ազգ.—Հոգևոր Ուսումնարանին Հայոց Տփխիսայ:

Ի ներկայութեան Նորին Ս. Օծութեան՝ Կրօնական գիտութեանց և Ազգային պատմութեան և այլոց քննութիւնք եղան: Այս առթիւ Տեսուչ Մեծ. Ստեփան Նազարեանց՝ ընթերցաւ մի ճառ: Իսկ ապա Նորին Ս. Օծութիւնն մի համառօտ յորդոր ուղղեց Մեծ. Հոգաբարձուաց, Տեսչին, դասատուաց և աշակերտաց. և օրհնեց զամենեսեան և վերադարձաւ 'ի Վեհարանն:

Ահաւասիկ նոյն ճառը: